ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2021 թվականի N 6- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐՈՎ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ>> ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾԱԽՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 257-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերով <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված գումարների նպատակային ծախսման համար ուսումնասիրություններ կատարելու ու առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ֆելիքս Ափինյան	- հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
Հարություն Քոչարյան	- հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ,
Արբակ Գրիգորյան	- ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական,
Մերուժան Հարությունյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
Ռուբեն Տիգրանյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
Աղաբեկ Գալստյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով

վարչության պետ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թվականի հուլիսի 29-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերով <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված գումարների նպատակային ծախսման համար ուսումնասիրություններ կատարելու, առաջարկություններ ներկայացնելու նպատակով հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի ապրիլի 2-ի N 11-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 257-Ա կարգադրությունը:

3. Հանձնարարել հանձնաժողովին՝ ուսումնասիրել ստացված դիմումները, առնվազն 15 օրը մեկ քննարկել մարզպետի հետ, կազմել արձանագրություն և ներկայացնել որոշման նախագիծ բնակիչներին դրամական օգնություններ տրամադրելու համար:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

14.01.2021

X

2021թ. հունվարի 14
ք.Իջևան